Հետաքրքիր է այն հանգամանքը, որ որպես կանոն, Դավրիժեցին այսպիսի դեպքերում կոնկրետ անուններ չի նշում: Եվ, ընդհանրապես, այս կարգի միավորներ օգտագործելիս հայ պատմիչները, եթե գործ չունեն գրավոր հանրահայտ աղբյուրների հետ, անուններ գրեթե չեն նշում, և կարելի է կարծել, որ նրանք, այնուամենայնիվ, հոգու խորքում կասկածել են ներբերվող վկայագրության հավաստիությանը, կամ, որ ավելի հավանական է, այդ այլտեքստերը հորինել են իրենք՝ ստեղծելով հավաստիության պատրանք: Այնուամենայնիվ, կան բացառիկ օրինակներ: Դավրիժեցին, օրինակ, հիշում է Մարտիրոս անունով եպիսկոպոսին. «Իսկ զկնիս, զոր արդ պատմեմք, Մարտիրոս անուամբ ոմն եպիսկոպոս պատմեաց՝ զոր ինքն էր աչօք տեսեալ: Ասէր՝ թէ...» (էջ 179): Մեկ այլ անգամ՝ Վարդան անունով եպիսկոպոսին. «Եւ ասէր վերոյիշեալ Վարդան եպիսկոպոսն, թէ...» (էջ 171):

Կարևոր կառուցվածքային նշանակություն ունեն այն միավորները, որոնցով Դավրիժեցին ամփոփում է իր պատմագրքի որևէ հատված կամ ամբողջացնում ասելիքը: Դրանք խմբավորվել են իբրև ***ավարտաբանություն*** կամ ***ասածի կոնկրետացում-եզրահանգում*** միավոր, թեպետ շատ հաճախ դրանք դրսևորվում են նաև որպես եզրակացություններ: Այս կարգի միավորներն ունեն իրենց այսպես ասած՝ «մատնող» բառային ցուցիչները՝ ***արդ*** և ***ամեն:*** Դրանցից երկրորդն աստվածաբանական տեքստերի, աղոթքների ավարտաբանական միավոր է, և Դավրիժեցու պատմագրքում էլ հիմնականում կիրառվում է հրաշքների, տեսիլների, վարքերի ու վկայաբանությունների պարագային: Ուշարժանն այն է, որ ***արդ***-ը կիրառվում է իբրև ավարտաբանություն ազդարարող նախադասության սկզբնադիր, սկսող միավոր, իսկ ***ամեն***-ը վերջնադիր, վերջնաբառ միավոր: Ինչպես՝ «Արդ թէ այսպէս և թէ այնպէս՝ եղեն երկու կաթուղիկոսք միոյ աթոռի ի միում ժամանակի» (էջ 58, սա ավելի շատ եզրակացություն է ներբերումների